

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 7

ԵՊՀ ԻՄ Տնտեսագիտության ֆակուլտետի գիտխորհրդի նիստի

17.04. 2021 թ.

ք. Իջևան

Առցանց կազմակերպած նիստին մասնակցել են Մ. Միքայելյանը, Գ. Հովհաննիսյանը, Ա. Պոտոսյանը, Պ. Ասիլբեկյան, Ա. Սարիբեկյանը, Ա. Ուլիխանյանը, Ա. Եգանյանը, , ֆակուլտետի ՈԻԳԸ-ի նախագահ Ի. Վարդանյանը, ֆակուլտետի ՈԻԽ-ի նախագահ Ա. Խոջումյանը, Ա. Ղարախանյանը: Նիստը անց է կացվել zoom.us հարթակում, գիտական խորհրդի նախագահին է Գ. Ավետիսյանը, քարտուղարը՝ Ա. Ալեքսանյանը:

Նիստի օրակարգը ներկայացրեց Գ. Ավետիսյանը:

Օրակարգ

1. 2020-2021 ուս. տարվա Տնտեսագիտության ֆակուլտետի «Ֆինանսներ», «Զբոսաշրջություն» կրթական ծրագրերի ավարտական կուրսերի ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կազմերի ձևավորում /Զեկ. Գ.Ավետիսյան/:
2. Ավարտական աշխատանքների նախապաշտպանությունների և պաշտպանությունների ժամանակացույցների հաստատում /Զեկ. Գ.Ավետիսյան/:
3. 2-րդ կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների արդյունքների ամփոփում /Զեկ. Գ.Ավետիսյան/:
4. Ավարտական կուրսերի քննաշրջանի արդյունքների ամփոփում /Զեկ. Գ.Ավետիսյան/:

Բաց քվեարկությամբ 12 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ համամասնությամբ որոշվեց.

Որոշում՝ 7/1

→ Հաստատել նիստի օրակարգը:

1. *Լսեցին- 2020-2021 ուս. տարվա Տնտեսագիտության ֆակուլտետի «Ֆինանսներ», «Զբոսաշրջություն» կրթական ծրագրերի ավարտական կուրսերի ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կազմերի ձևավորման մասին /Զեկ. Գ. Ավետիսյան/:*

Գ. Ավետիսյանը հաղորդեց, որ ղեկավարվելով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳՈՎ» / 2017 թվականի նոյեմբերի 7-ի N 1282-Ն հրաման/ տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի հաստատմանն ենք ներկայացնում 2020-2021 ուստարվա «Ֆինանսներ» և «Զբոսաշրջություն» մասնագիտությունների ավարտական կուրսերի ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կազմերը:

Դեկանի պաշտոնակատարը նշեց, որ ըստ վերոնշյալ կարգի՝ ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի կազմում ընդգրկվում են տվյալ ոլորտի գործատուների և ակադեմիական հաստատությունների ներկայացուցիչներ, համապատասխան ֆակուլտետի ղեկանը, ամբիոնի վարիչները, պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներ: Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նիստերն արձանագրում է քարտուղարը, ով տվյալ հաստատության աշխատակից է և հանձնաժողովի անդամ չէ: Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի կազմի առնվազն 50%-ը պետք է լինեն ոչ տվյալ հաստատության աշխատակիցներ:

«Ֆինանսներ» ԿՕ

1. Այվազյան Քնարիկ Ավագի նախագահ, տ.գ.թ., ՀՀ ԿԲ Ֆինանսական համակարգի կայունության և զարգացման վարչություն, Մակրոպրոդեցիալ քաղաքականության և մոդելավորման բաժնի առաջատար մասնագետ,
2. Ավետիսյան Գայանե Հրաչիկի տ.գ.թ., դոցենտ, Տնտեսագիտության ֆակուլտետի ղեկանի ժ/պ
3. Միքայելյան Միքայել Վարազդատի տ.գ.դ., պրոֆեսոր, ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի վարիչի ժ/պ
4. Ղալթախչյան Արթուր Արծրունի ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի դասախոս, ՀՀ ԿԲ-ի դրամավարկային և ֆինանսական վիճակագրության բաժնի պետ
5. Մելիքջանյան Լևոն Վալդդի «Արդշինբանկ ՓԲԸ» Իջևան մասնաճյուղի կառավարիչ

6.Նագինյան Մկրտիչ Արամի

ՀՀ ՊԵԿ ՀՎ ընթացիկ հսկողության հարկային տեսչության-վարչության տարածքային թիվ 13 /Տավուշի/ բաժնի պետ

«Զբոսաշրջություն» ԿԾ

- 1. Սայադյան Հովիկ Յախշիբեկի նախագահ, Գերմանիայի միջազգային զարգացման գործակալության (GIZ) «Եվրամիությունը Սևանի համար» ծրագրի «Կայուն հողօգտագործման» խորհրդատու, աշխ. գ.դ., պրոֆեսոր
- 2. Հովհաննիսյան Գուրգեն Ժորժիկի աշխ.գ.թ., պրոֆեսոր, ԵՊՀ բակալավրիատի բաժնի վարիչ, Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի վարիչի ժ/պ
- 3. Ազիզյան Հռիփսիմե Մկրտիչի մ.գ.թ., տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի ասիստենտ,
- 4. Ասիլբեկյան Պավել Նորիկի տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի ասիստենտ,
- 5. Դավթյան Անի Գագիկի «Լաստիվեր Ռեզորտ» հյուրանոցի փոխտնօրեն,
- 6. Սարգսյան Վարդան Վոլոդյայի «Վահան և թոռներ ՍՊԸ» տնօրեն

Արտահայտվեցին.- Մ. Միքայելյանը, Գ. Հովհաննիսյանը:

Ղեկավարվելով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՅՆՈՂ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳՈՎ» / 2017 թվականի նոյեմբերի 7-ի N 1282-Ն հրաման/՝ տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին.- Հաստատել 2020-2021 ուստարվա Տնտեսագիտության ֆակուլտետի «Ցինանսներ» և «Զբոսաշրջություն» կրթական ծրագրերի ավարտական կուրսերի ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կազմերը և ներկայացնել տնօրենի հաստատմանը:

2. Լսեցին.- 2020-2021 ուստարվա ավարտական կուրսերի ավարտական աշխատանքների նախապաշտպանության ու պաշտպանության գրաֆիկների հաստատման մասին: /Ձեկ.Գ. Ավետիսյան/

Գ. Ավետիսյանը հաղորդեց, որ ուսանողի կողմից բակալավրի կրթական ծրագրի ելքային արդյունքներին համապատասխան մասնագիտական գիտելիքների և կարողությունների ձեռքբերումը հաստատվում է ավարտական աշխատանքի կատարումով և պաշտպանությամբ: Հաջողված ավարտական աշխատանքի կատարման և պաշտպանության իրականացման համար կարևոր է ավարտական աշխատանքների նախապաշտպանության կազմակերպումը և անցկացումը, որը հնարավորություն է տալիս բացահայտելու և շտկելու առկա բացթողումները: Ելնելով վերոնշյալից՝ ներկայացնում եմ 2020-2021 ուստարվա ավարտական աշխատանքների պաշտպանության և նախապաշտպանության գրաֆիկները.

ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ	ՖԻՆԱՆՍՆԵՐ	ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ
Պաշտպանություն	29.05. 2021	29.05.2021
Նախապաշտպանություն	11.05. 2021	08.05. 2021
Նախնական տարբերակը ամբիոնին տրամադրել	08.05.2021	06. 05. 2021
Վերջնական տարբերակը ամբիոնին տրամադրել /կարծիքի հետ համատեղ/	մինչև 18.05.2021	մինչև 15.05.2021
Ուղարկել հանձնաժողովի անդամներին /ամբողջ փաթեթը/	22.05.2021	22.05.2021

Արտահայտվեցին.- Մ. Միքայելյանը, Գ. Հովհաննիսյանը:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.2 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին.- Հաստատել 2020-2021 ուստարվա ավարտական կուրսերի ավարտական աշխատանքների նախապաշտպանության ու պաշտպանության գրաֆիկները և ներկայացնել տնօրենի հաստատմանը:

3. Լսեցին- II կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների արդյունքների ամփոփման մասին /Ձեկ. Գ.Ավետիսյան/:

Գ. Ավետիսյանը հաղորդեց, որ 2020-2021 ուստարվա երկրորդ կիսամյակի առաջին ընթացիկ քննությունները և ստուգումները կազմակերպվել են սահմանված ժամանակացույցին համապատասխան՝ ապրիլի 5-10-ը: Ամբիոնները կիսամյակի սկզբում ուսանողներին տրամադրել են հարցաշարերը, 8 շաբաթվա կտրվածքով ուսումնասիրել են դասընթացների կատարողականը, տոմսերը, թեստերն ու տարբերակները ստուգվել և հաստատվել են ամբիոնների վարիչների կողմից: Համապատասխան ժամանակացույցները ժամանակին ներկայացվել են ՈՒՄՎ, քննարկվել դասախոսների և ուսանողների հետ: Նա նշեց, որ ֆակուլտետում կազմակերպվել է 11 ընթացիկ ստուգում, 17 ընթացիկ քննություն: Քննությունների և ստուգումների գերակշիռ մասը /25/ իրականացվել է հեռավար, լսարանում իրականացվել է 3-ը:

Դեկանի պաշտոնակատարը հաղորդեց, որ ֆակուլտետում II կիսամյակի առաջին ընթացիկ քննություններին և ստուգումներին մասնակցել են 91 ուսանող / ֆինանսներ ԿԾ՝ 56, Զբոսաշրջություն ԿԾ՝ 35 ուսանող/: Ընթացիկ քննությունների միջին ցուցանիշը Զբոսաշրջություն ԿԾ՝ 3,69 (4,43 անվճար համակարգում սովորողների շրջանում) , իսկ ֆինանսներ ԿԾ՝ 2,85(4,30՝ անվճար համակարգում սովորողների շրջանում): Ֆակուլտետետի կտրվածքով. ընթացիկ քննություններ՝ 3,14 (4,43՝ անվճար համակարգում սովորողների շրջանում), ընթացիկ ստուգումներ՝ 6,92 է (9,33՝ անվճար համակարգում սովորողների շրջանում): Արդյունքները քննարկվել են ուսանողների հետ, գրավոր բողոք չի եղել:

Առաջադիմություն

II կիսամյակ. Իրնթացիկ քննություններ և ստուգումներ

Կրթական ծրագիր	ուսանողների թիվ/անվճար	ընթ քննութ./ստ քանակը	ընթ քննութ. միջին գնահ. /անվճար	ընթ.ստ. միջին գնահ. /անվճար
2020-2021 ուստարի				
Ֆինանսներ /I-III կուրսեր/	56/15	9/4	2,85/4,30	6,92/9,38
Զբոսաշրջություն /I-III կուրսեր/	35/9	8/7	3,69/4,67	6,92/9,29
ընդամենը ֆակուլտետում	91/24	17/11	3,14/4,43	6,92/9,33

Արտահայտվեցին.- Գ. Հովհաննիսյանը, Ա. Պոտոսյանը:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.11 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին- II կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների արդյունքների ամփոփման մասին հաղորդումն ընդունել ի գիտություն:

4. Լսեցին- Ավարտական կուրսերի քննաշրջանի արդյունքների ամփոփման մասին: /Ձեկ. Գ. Ավետիսյան/

Գ. Ավետիսյանը հաղորդեց, որ 2020-2021 ուստարվա ավարտական կուրսերի երկրորդ կիսամյակի քննաշրջանը կազմակերպվել է սահմանված ժամանակացույցին համապատասխան՝ ապրիլի 3-10-ը: Քննությունները կազմակերպվել են հետևյալով: Ավարտական կուրսերի թվով 23 ուսանողներ հանձնել են բանավոր քննությունները: Անբավարար գնահատական ստացել է մեկ ուսանող, ով վերահանձնել է առաջին լուծարքային շրջանում: Գերազանց գնահատականներ ստացել են «Ֆինանսներ» ԿԾ՝ 3 և «Զբոսաշրջություն» ԿԾ՝ 1 ուսանող: Արդյունքները քննարկվել են ուսանողների հետ, գրավոր բողոք չի եղել:

Արտահայտվեցին.- Գ. Հովհաննիսյանը, Ա. Պոտոսյանը:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.11 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին- Ավարտական կուրսերի քննաշրջանի արդյունքների ամփոփման մասին հաղորդումը ընդունել ի գիտություն:

***Գիտական խորհրդի նախագահ՝
Քարտուղար՝***

***Գ. Ավետիսյան
Ա. Ալեքսանյան***